

5.3. 2009թ. նոյեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, նոյեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 0.5-1.5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +14 +15°C, Արարատյան դաշտավայրում՝ +13 +14°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +12 +13°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +9 +12°C, լեռնային շրջաններում՝ +5 +9°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի առաջին կեսին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +18 +22°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +15 +19°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +13 +18°C (ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ)՝ +20°C), լեռնային շրջաններում՝ +11 +16°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում կազմել է -4 +1°C, Սյունիքի նախալեռներում՝ -1 +2°C, ՀՀ Տավուշի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ +1 +5°C, Սյունիքի հովիտներում՝ +5 +7°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է նոյեմբերի 28-30-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է -7 -12°C (Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -18°C), Արարատյան դաշտավայրում՝ -3 -7°C, Սյունիքի նախալեռներում՝ -1 -6°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -12°C), ՀՀ Տավուշի մարզում՝ 0 -5°C, Սյունիքի հովիտներում՝ -2 +2°C (ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -5°C):

Նոյեմբեր ամսվա ընթացքում տեղումների քանակը Սյունիքի հովիտներում կազմել է նորմայի 118-135%-ը, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում՝ 80-120% (ք.Թալինում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 135%, ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 154%, ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ 226%), Արարատյան դաշտավայրում և ՀՀ Շիրակի մարզում՝ 50-100%:

Նոյեմբերի 1-3-ին, 15-ին, 18-19-ին և 21-ին տարածաշրջանների մեծ մասում, 4-5-ին, 14-ին, 23-ին և 26-ին առանձին տարածաշրջաններում դիտվել են տեղումներ, լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում՝ ձյուն: Նոյեմբերի 15-ին տարածաշրջանների մեծ մասում, 26-ին Մասրիկ գյուղում գրանցվել է ամպրոպ:

Նոյեմբերի 1-ին Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 2-ին և 14-ին՝ ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ), 4-ին՝ ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 8-ին, 11-15-ին և 25-ին՝ ՀՀ Լոռու մարզի առանձին վայրերում, 11-ին և 15-ին՝ Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), 15-ին և 30-ին՝ Արարատյան դաշտավայրում, 19-ին՝ ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ), 23-ին և 25-ին՝ ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ) դիտվել է մառախուղ:

Նոյեմբերի 3-ին ք.Մարտունիում, 3-ին և 5-ին՝ ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ), 3-4-ին, 19-ին, 21-ին և 26-ին՝ ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 4-5-ին՝ ք.Վանաձորում, 5-ին՝ ք.Քաջարանում (ՀՀ Սյունիքի մարզ), 19-ին՝ Աշոցք գյուղում, 21-ին և

26-ին՝ Մերձավան գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ), 26-ին՝ ք.Տաշիրում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-20 մ/վրկ, պռոթկումները՝ 15-26 մ/վրկ:

Նոյեմբերի 15-ին ք.Տաշիրում և ք.Ապարանում դիտվել է կարկուտ, համապատասխանաբար՝ 6 մմ և 10 մմ տրամագծերով:

Նոյեմբերի 30-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը Արագած բարձր լեռնային կայանում կազմել է 83 սմ, Որոտանի լեռնացքում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 17 սմ, Պուշկինի լեռնացքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 10 սմ, ՀՀ Գեղարքունիքի մարզում և ք.Ջերմուկում՝ 1-5-ական սմ:

Նոյեմբերին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-120%-ը:

Սևանա լճի մակարդակը նոյեմբեր ամսվա ընթացքում իջել է 5 սմ-ով և 2009թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1899.26 մ, որը 2008թ. նույն օրվա համեմատ բարձր է 38 սմ-ով: